

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաբանայիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՒՄԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղաքային կրօնական ընկերութիւնը. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ինչի թանգ է մի-
որ Թիֆլիսում. Իմ պատմութեանը. Կամայի խմբա-
գրին. Կրօնին լուսինը. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զոհակներէն տօնը Միւսիւրնում. Կամայի Թիֆ-
լիսային. Արտաքին լուսինը. ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ. ԶեոնԱԳԻՐՆԵՐ. ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Մի ցանկալի տեղեկացիւ:

ԹԵՖԼԻՍԻ ԲԱՆԱՐԱՐՈՒՆ ԿՐԵՒԻՏԱԿԱՆ ԸՆ- ԿԵՆՈՒԹԻՒՆԸ

Տարօրինակ բաներ են կատարւում Թիֆ-
լիսում Թիֆլիսի քաղաքային կրօնական ընկերութեան վարչութիւնը շուտով կայաց-
նելու է ընկերութեան լիազօրեան ընդհա-
նուր ժողովի ընկերութեան գանձապահ,
պ. Տիգրանեանի մեղաւորութիւնը քննելու
համար: Ասում են, որ վարչութիւնը առա-
ջարկելու է ընդհանուր ժողովին հեռաց-
նել գանձապահութիւնից պ. Տիգրանեան-
ին:

Աւելին պէտք է ընդունել, որ այժմեան
գանձապահը մի օր և է բանում մեղաւոր,
կամ նոյն իսկ յանցաւոր է եղել, որ նա
պարտաւորաց, իրաւագտն է եղել իր պաշ-
տօնում, անհատաւորիմ է եղել ընկերու-
թեան շահերին և այլն...

Մակայն ինչ է յայտնւում: Տեղական
«Тифл. Листок» լրագիրը շատ ուղիղ է
նկատում որ այժմեան գանձապահին, իր գոր-
ծակներութեան կրօնական համար ընկերու-
թեան ընդհանուր ժողովը ոչ թէ միայն
չը պէտք է հեռացնել իր պաշտօնից, այլ
զեւ պէտք է շնորհակալութիւն յայտնել և
քաջալերել նրան, քանի որ նրա յանգանքը
միմիայն նրանում էր կայանում, որ նա
չարկից դուրս ձեռք է եղել իր պաշտօնա-
վարութեան մէջ: Ինչի մէջն է նրա յան-
ցանքը. նա հասկանալով իր պաշտօնի նշա-
նակութիւնը, բոլորեալ լինելով այն ճշմուր-
տութիւնը, որ ինքն ընտրւած լինելով ընկե-
րութեան ընդհանուր ժողովից և ոչ թէ վար-
չակի պաշտօնային լինելով, ոչ թէ ընկերու-
թեան վարչութեան կողմից նշանակւած լի-
նելով իր պաշտօնավարութեան ամբողջ ըն-
թացքում պարտաւոր և նախանձախնդիր էր
հանդիսանում ընկերութեան շահերին և
շատ անգամ չէր հնազանդւում վարչու-
թեան կարգադրութիւններին, որոնց ընկե-
րութեան կանոնադրութեան հիման վրա

սխալ, կամ անարդար էր գտնում: Այդպէս
օրինակ կանոնադրութեան զօրութեամբ
բանկային հաշիւներէն զտրուեցին պէտք
զանքէն կասկածում և ոչ թէ ընկերու-
թեան վարչութեան նախագահի գրասեղա-
նում: Եւ այդ կողմից կանոնադրութեան
ձեռք կատարում էր պահանջում գանձա-
պահը: Կանոնադրութեան զօրութեամբ ըն-
կերութեան վարչութեան կողմից տրված
բոլոր շրջաբերականները պէտք է ստորագր-
ված լինեն թէ նախագահի և թէ վար-
չութեան անդամների ու վերադիտող մաս-
նաժողովի անդամների մեծամասնութեան
ձեռքով այն ինչ յաճախ էր պատահում որ
այդ շրջաբերականները ստորագրւում էին
միայն մի քանի անդամների ձեռքով: Այդ
անկանոնութեան դէմ էլ բողոքում էր գան-
ձապահը: Այսպէս նա կասկածից փող չէր
տալիս, երբ այս կամ այն պատճառով վար-
չութեան կողմից տրված օրէքէրը կանոնա-
դրութեան ձեռք իմաստով օրինաւոր չէր և
անկանոն էր յայտնւում: Եւ չուզեց նմանա-
պէս վճարել գրասեղան թղթերի այն կու-
պոնները, որոնք մի անգամ արդէն վճար-
ված էին եղել:

Ընկերացող տեսնում է ուրեմն, որ այդ-
տեղ կայ առնուաժան մի թիւրիմացութիւն,
ուզենալ հեռացնել հաստատութիւնից մի
պաշտօնային, որովհետեւ նա հաստատացած
է թէ իր պարտքն է կատարում և պաշտ-
պանում ամբողջ ընկերութեան շահերը,
քանի որ ընտրւած լինելով ընկերութեան
ընդհանուր ժողովից, ինքն է պատասխա-
նատու ընկերութեան կասկածի հաշիւներու-
թեան ճշմարտութեան և կասկածի ապահովու-
թեան համար, առնուաժան մի տարօրինակ
կրեպիտ:

Ամբողջ ընկերութեան ընդհանուր ժող-
ովից երբեք տարի ժամանակով ընտրւած
գանձապահին հեռացնել իր պաշտօնից,
այն պատճառով որ նա անպայման հա-
զանդութիւն չէր ցուց տալիս ընկերութեան
վարչութեան և նախագահի կամայական
պահանջներին, կամ զուցէ նրանց անպատ-
կառ էր վերաբերւում, բաւական խոր կեր-
պով դուրս չէր տալիս նրանց: Եւ տե-
սակ բան կարող է պատահել միմիայն ա-
սիական բանկային հաստատութիւններում
մի օր և է Թիֆլիսայում կամ Պարսկաս-
տանում:

Թող գումարվել ընդհանուր ժողովն ա-
նաշառ կերպով քննէ ո՞վ է աւելի նա-

խանձանդիր եղել ընկերութեան շահերին,
նախագահը իր վարչութեամբ, թէ գանձա-
պահը և ըստ այնմ վճռէ գանձապահին իր
պաշտօնից հեռացնելու, կամ նրան իր պաշ-
տօնում զարձակ պահելու խնդիրը...

Եւ թող չը մոռանայ ընկերութեան ընդ-
հանուր ժողովը, որ նրա վճիռն էլ ինչ
էլ լինի այդ վճիռը, վերջնական վճիռ չէ,
քանի որ Ռուսաստանում, օրէնքների հի-
ման վրա, բոլոր բանկային հաստատու-
թիւնների վրա կայ և մի աւելի բարձր
վճռալից ատեն, այն է Ֆինանսական
մինիստրութիւնը, որը կարող է և ոչնչաց-
նել ընդհանուր ժողովի վճիռը, եթէ այդ
վճիռը անհիմն, անարդար և անօրինի է
եղել:

Թող չը մոռանան որ Թիֆլիսի քաղաքա-
յին կրօնական ընկերութիւնը մի մաս-
նաւոր, նեղ սկզբունքական ընկերութիւն
չէ, այլ հասարակական քաղաքային մի հաս-
տատութիւն է, որը հիմնված է ընկերու-
թեան բոլոր անդամների փոխադարձ հա-
մբարշտութեան վրա: Ուրեմն այդ տեսակ
ընկերութեան ընտրւած գանձապահը որ-
չափ ձեռք, պարտաճանաչ, ընկերութեան
շահերին նախանձախնդիր, ազնիւ և ան-
կախ ընտրութեան տեղ մարդ պիտի լի-
նի, որը երբեք չը պիտի խոնարհվի ընկե-
րութեան վարչութեան անկանոն պահանջ-
ների առջև, այլ պէտք է վարվի անկախ
կերպով անպայման պէտքէն առաջ
համեմատ հաստատված կանոնադրութեան
բառացի խնամքին: Եւ պէտք է մոռանալ,
որ գանձապահը այդ տեսակ հաստատու-
թիւնների մէջ միմիայն լուր անպատասխան
պահող չէ ընկերութեան զարմարվելի, այլ
ընկերութեան շահերի և գործերի ամբողջ
խնամքը, բանիկ գործակալութեան պա-
տասխանատու մի անձնավորութիւն:

Թող չը մոռանայ ընկերութեան նախա-
գահը և ընկերութեան վարչութիւնը որ
քաղաքային կրօնական ընկերութեան
պէս մի հաստատութիւն գանձապահը ի-
րանց վարձված մարդ չէ, այլ ընդհանուր
ժողովի կողմից ընտրված մարդ է, որը
հանդիսանում է ընկերութեան կասկածի
հաշիւներում պահապան հնարաւոր ան-
կանոնութիւնների, անօրինութիւնների և
զեղծումների դէմ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՁԻ ԹԱՆԻ Ե ՄԻՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Նայելով ներկայ հանգամանքներին և խելա-
մուտ լինելով երկրի իսկական դրութեանը, մարդ
ակամայ հարցնում է ինքն իրան՝ ինչի թանգ է
միայն Թիֆլիսում: Բայց դրան պատասխան տուող
քաղաքային վարչութիւնը մինչև այսօր լուրջ
է պահանջում: Եթէ հայր թանգ է այժմ, քան
թէ անցեալ տարիներում, այս հասկանալի է ինքն
ըստ ինքեան, որովհետեւ այս տարի անսովոր
կրաւորութիւն էր ամեն տեղ, առանց քաղաքու-
թեան:

Բայց մեզ վարմանում է մեր թանգ լինելը,
մասնաւոր այն պատճառով, որ հայ, վրացի, թուրք
և քիւրդ պիւղաճիւղները, իրանց եղն ու ոչնչալը, սո-
վից չը կտորելու համար, հոտերով և երամներով
քշում տանում են քաղաքները, չնայն դեռ մաս-
վածաւորներ ծախելու: Այսպէս վարվել էլ չէին
կարող գիւղացիները, թէև շատ էլ ցուէին
իրանց հայ և հայդուտ մատակարարող անասուն-
ներից զրկվելու, քանի որ խոտ չը կայ, դարման
չը կայ նրանց կերակրելու համար:

Եւ այդ հանգամանքից օգտւում են մեր մաս-
վածաւորները, բայց չը նայելով որ խիստ էական են
առնում տաւարը, այնու ամենայնիւ միայն մեղա-
նում շարունակ թանգ է ծախվում: Եթէ ասեմք,
կրկնակի վճար են մերցման մեր մատակարարող
չինք սխալվել ամենեւեւ: Կարծես բաւական չէր
կրաւորութիւնը, վրա հասած և անկախ չէր խո-
րան, բայց սրանից առնուաժան էլ չը կայ առ-
հետաւորի ձեռագործն առնող չուռի, կենսական
անհրաժեշտ մթերքները չափազանց թանգ են, ու-
րեմն ինչպէս ապրի իր ձեռքի աշխատանքով
չբաւոր դատակարար. ո՞վ սրանց մասին մտած է
հոգ տանել, եթէ ոչ նոյն իսկ քաղաքային ինքնա-
վարութիւնը, չափ ու տանման դնելով մեր աղուի-
ների, բաղկանիւրի և մանուսանց մեր ազա՝ մաս-
վածաւորի ծախսող շահախնդրութեանը: Հատ
անգամ երբ լսել, որ մեր քաղաք դարձւում է
կերակրւում, մանաւոր ներկեր չէ գործածում:
Բայց նկատած ենք և շատ անգամ, որ երբ մեր
քաղաքային վարչութեան աղէտները, մեր նոր
տակաւ նշանակւած համար, ոչնչալ ու տաւար
մերթէլ և ֆուտար հինգ կոպեկով ծախել են սկը-
սում, տեսէք թէ խեղճ արհեստագործները ինչպէս
են միմեանց ձեռքից խլելով տանում և տուն տա-

ԲԱՆԱՐԱՐՈՒՆ ԿՐԵՒԻՏԱԿԱՆ

ՄԻ ԶԱՆԿԱԼԻ ՏԵՆԵՆՏԱՆ

Հողի աճադին նշանակութիւնը, այդ մի կեան-
քի և մահվան խնդիրը, այդ մի լինել կամ չը
լինելը ոչ թէ անարդէյ տարի, այլ օր օրի վրա դա-
ւի, կենսական է դառնում: Գինեգործութեան այս
վերջին տարը տարվայ մէջ դէպի առաջ արած
աճադին քայլերը, չերանայաճութեան տարածվե-
լը, ցորենի արտաճանութեան զարգացումը, այդ բա-
ւոյրը ցուց է տալիս անխնայանի կերպով, որ մեր
կենսիկ նորանոր պայմանները, նոր էլիմանների
հետ կապած յարաբերութիւնները, ինչպէս և
պէտք էր սպասել, մեղ վրա մեծ, արմատական
ազդեցութիւն ունեցան. մենք մեռնել չը կամե-
նալով, սկսել ենք յարմարվել դոյութեան կուլի նոր
միջոցներին, ինչպէս որ դա յատուկ է եղել մեզ,
շնորհով մեր տարածապայման փեանքի:

Այստեղ եւ երկար չեմ կանգնում այն ընդու-
նակութիւնների մասին, որ մենք մի տարը
տարում, կամ աւելի պակաս ժամանակում,
կարողացանք ձեռք բերել նաւթային արդիւնաբե-
րութեան մէջ. չեմ խոտում մարգանցի, պղնձի,
ծծումքի, քարածուխի և այլ շատ տեսակ գործն-

քի մասին, որոնց մէջ տեղացիները արդէն սկսե-
լ են շատ թէ քիչ ազդեցութեամբ խառնվել, իրիկ
անել, նախաձեռնութիւն ցուց տալ, եւ անող գործ
դնել: Եւ ուղղւում եմ մի քանի խօսք ասել միայն
հողի մասին: Այժմ, երբ կապիտալի վճարող
տրիւնների չափը իրան կապիտալի ուժա-
սպառ է անում, սկսել են ուշադրութիւններ
դարձնել հողերի վրա, մտածել նրանց մասին,
ամեն տեղ այժմ, թէ անհատական կամ թէ հա-
ւաքական ուժերով հողեր գնելու խնդիրը դանա-
ղան չըջաննելու բաւականաչափ հետաքրքրվող
ներ է գտնում, շատ մարդկանց մտքը է գրա-
ղեցնում, շատերի համար idee fixe է դառնում:
Սկսել են հասկանալ (ինչքան շուտ հասկանալիք
այնքան լաւ կը լինէր մեղ համար), որ մեր վի-
րան տարածվ չէ կարող համարել, իր տեղը պիտի
չէ կարող հաշուել, մինչև որ այն երկրում, ուր նա
կենսում է և իր գաղտնի սերունդը պիտի կենայ, նա
չունենայ հողային սեփականութիւն. այս դէպ-
քում, ինչ որ ճիշդ է, մի անհատի համար, նա և
ճիշդ է մի ամբողջ ժողովրդի համար: Այժմ են
սկսել խոր մտածել ու, քարեքաղաքար, թափան-
ցիկ որ մի քանի հարիւր հազար, դեռ աւելի պա-
կար չեմ ասում, գրաւում առնելու չէ նշա-
նակում ապահով լինել կրկնութիւններից, և ոչ ոք չէ
կարող յուսալ, որ վաղը նա չի մեղա դատարկ
ձեռքերով ձեռք այն գրութեան մէջ, ինչ դրու-

թեան մէջ լինում է միշտ անհող քաղաքներ, պրո-
լետարիատը, սրանց թիւը, ի դէպ է, գիւղադա-
րար, յիշեալ այստեղ, օրից օր շատանում է:
Կարող եմ, յարգելի ընկերացողս հաւատացնել, որ
ուսումնից ու գործադուրից դուրս, միջին ընդու-
նակութեան անը վաճառականը, անշարժ սեփա-
կանութիւնից դուրս քաղաքացին, ոչ-արհեստագոր
ծուտ աշուղները աւելի գիւղացի պիտի համարվեն,
քան թէ 14—25 ռուբլի, սոսաւոր գանգիւղացի
մշակը:

Վերջինս ունի մի կտոր հող, կենսիկ միջոց
որին նա դիմում է, ճէնց որ սկսվում է պարբերա-
կան դարձած կրկնութիւն. հինգ գործերը կրճատվում
ու դադարում են, նա թողնում է Բագուն ու Բա-
լախան ու գնում իր գիւղը, իր հողը, վրա իր
մի կտոր չոր ճացի յոյսով, բայց ինչ յոյսով և ուր
պիտի գնայ այդ դէպքում քաղաքացին:

Նոր կենսիկ իր հետ անհամեմատ աւելի շատ
պահանջներ է բերել, քան թէ միջոցներ այդ
պահանջներին բաւականացնելու: Միւս կող-
մից, շատ պարզ է և այն հանգամանքը, որ կենսիկ
գիւղացիներ է և քանի գնայ անտանելի կը դա-
նայ, եթէ որ ամեն մէկը միջոցներ գտնելու մասին
լքվորեն չը մտածէ: Հողը այդ միջոցներից ամե-
նագումարն է, իսկ հո՞ւ չէ յայտնի թէ ինչ վի-
ճակի մէջ կարող են ընկնել մեր կենսիկ այդ
աղբիւրները մի քանի տարիներից յետոյ: Այսօր-

վաղը կրկնութիւն իր թիւերը կը տարածէ դէպի
Երևան, Շուշի, Նուխի, Դամբախի և այլն. շուտով
ծովի երեսին լողացող չորհրաւերի հետ դու-
զանաւոր բաղուից, Վրացի ու Դերբենտի
վրայով կը սլանայ երկաթուղու գնացքը, անցնե-
լով ցորենի արմատների վրայից ու խաղողների
այգիների միջով: Երևանի բաղաւրը, արդեղին ու
զինին, Վարաբադի հայրը, բոժոժը, զինին և այլն,
այս բոլորը հեղեղի պէս կը սկսեն դուրս թափ-
վել, երկրի կը կենդանանայ, մի փոքր կտոր
հող չի մնայ անաշակ, չոր ու ցամաք տեղեր
կը ջրովն արհեստական առուններով անցկացրած
ջրերով: Դժուար է երևակայել թէ ինչ ծաւալ
կրկնութիւն երկրի արտաճանութիւնը: Նոյնպիսի
գիւղեր է երևակայել այն գանաւոր տուտի գոր-
ծարանները, որոնք կը հիմնվեն այդ արդիւնաբերու-
թիւնները տեղն ու տեղը մշակելու համար: Եւ
այս բոլորի տէրերը կը լինեն այն մարդիկ, որոնք
իրանց ձեռքին կունենան զխաւոր և միակ պայ-
մանը, այն է հողը, երկրագործի անդարար կեղծը:
Նոր ծագող արդիւնաբերութիւնների մէջ մրցումին
մենք կարող ենք դիմանալ, կարող ենք մեր
կոնկուրենտներից օրինակ առնել, բայց մի ան-
գամ կորցրած հողը անկարելի կը լինի նորից
յետ գնել: Այժմեանից իսկ օտար տարրը, ինչ-
պիսին է գերմանացին, ընթացին և հրէան, սկսել
է մեծ քանակութեամբ հողային սեփականու-

